0270070

Համաձայնագիր N

«Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին» թիվ U002/05/12/2011 պայմանագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ

ք. Երևան «28» նոյեմբեր 2018թ.

«Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության կորպորատիվ վաճառքի և աջակցման մասնագետ Անի Գալուստյանի, ով գործում է 01.08.2018թ.-ին տրված լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մի կողմից, և «ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող վարչություն» ՊՈԱԿ-ն, ի դեմս ընկերության լիազորված անձ Ալեքսանդր Խաչատրյանի (005760426, 31.03.2017, 011), ով գործում է 28.11.2018 տրված լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Բաժանորդ», մյուս կողմից (այսուհետ միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»), ղեկավարվելով Կողմերի միջև 05/12/2011թ. կնքված «Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին» թիվ U002/05/12/2011 պայմանագրով (այսուհետ՝ «Պայմանագիր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին.
   1.1. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի 1-ին կետը շարադրել հետևյալ կերպ.

1.Տրամադրվող ծառայություն(ներ)՝

N	Նկարագրություն	Ամսավճար (ՀՀ դրամ)	Հասցեներ
1	U!TV Full Corporate	8500	ք.Երևան, Հալաբյան 41ա

   1.2. Պայմանագրի Հավելված 1-ի 2.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ծառայության (Ծառայությունների) ամսական վճարը կազմում է 8500 (ութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ»:
   1.3. Պայմանագրի Հավելված 1-ում ավելացնել 2.2 կետը հետևյալ խմբագրությամբ.
   «Կողմերը սույնով ընդունում և համաձայնում են, որ համակցման աշխատանքներից առաջ կատարված չափագրման ժամանակ հաշված երկարությունը կարող է տարբերվել փաստացի օգտագործված մալուխների երկարությունից, ուստի համակցման աշխատանքների դիմաց վճարելու ժամանակ հիմք է ընդունվում ոչ թե չափագրման ժամանակ հաշված երկարությունը, այլ Սարքի հանձնման-ընդունման ակտում նշված փաստացի օգտագործված մալուխների երկարությունը»:
2. Պայմանագրի մյուս կետերը թողնել անփոփոխ:
3. Սույն համաձայնագիրը կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:
4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման և կնքման պահից:

5. Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Օպերատոր	Բաժանորդ
«Յուքոմ» ՍՊԸ	ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող վարչություն ՊՈԱԿ
Իրավ. հասցե՝ք. Երևան, Տերյան 19, բն.4	Իրավ. հասցե՝ ք.Երևան, Հալաբյան 41ա
Գործ. հասցե՝ ք. Երևան, Գր. Լուսավորիչ 9	Գործ. հասցե՝ ք.Երևան, Հալաբյան 41ա
Հեռ.՝ 374 11 400 400	ՀՎՀՀ 01223338
Ֆաքս՝ 374 11 400 401	Հեռ.՝ 091510298
ՀՎՀՀ 00024873	
«Ամերիաբանկ» ՓԲԸ	
Հ/Հ 1570043102134100	
Կորպորատիվ վաճառքի և աջակցման մասնագետ՝	Լիազորված անձ՝
Ա. Գալուստյան	Ալ. Խաչատրյան